

սագրքի հետո Գիրքը հրատարակուելուց յետոյ հասարակութեանն է պատկանում և հասարակութիւնը կարող է իւր կարծիքը յայտնել ուրիշ մէկն էլ եռ եմ. Եթէ Պ. Գուռնին ինձ էլ հերհուածող աղանդաւոր համարելով կ'ասի. իսկ զյոյիլոսաց, իմաստակաց և հերձուածող աշանդաւորաց բժախնդրութեանց դէմ սկարաստած եմ մի մեծ և ընդարձակ պատասխանի. այն է. ար համար հական լոռութիւն. (Եր. Է.) ինքն գիտե, Քայլց ես իմ կողմից իրեւ վնրջին խօսք կ'ասեմ 251 երեսի վերջին հատուածի երկու անկապ իմաստները բոլորովին անպէտք են, ինչ յարաբերութիւն ունին Սովորմանի Խմաստութեան զրբի Բ. 12—23. Պ. 10—15. Ե. 1—5 գրուածները՝ զրբի վերջաբան համարելի գրուածքի հետ որ միասին են գրուած տռանց նոր տողից անդամ սկսելու.

Եթէ Բ. տպագրութեան ժամանակ Պ. Գուռնին ուշ կը դարձնի լեզուի կանոնաւորութեան, գիտելիքների օրինաւոր և ամփոփ դասաւորութեան վերայ, մատենագրական քննադատական հատուածները յապաւելով՝ կիմանամ որ Պ. Գուռնին իմ խօսքերը բարեկամի խորհուրդունելով յարգել է:

6. Ա. Ա.

172 հունվարի 1880 թ.

Ի Ս. Էջեմուն

Թ. Ղ. Թ. Ա. Կ Յ Ո Ւ Թ. Ի Ւ Ն.

Յայտնի է, որ երկրագործի կառավարուելու միակ միջոցն ու յոյսն են հողն ու ջուրը. Հողն ու ջուրն են նորան սիրտ և ոյժ տուողն, հողն ու ջուրն են նորա բազմաթիւ գերգաստանի օրապահիկն ու կենսական բոլոր պիտոյքը արտադրում:

Կ'նչ սիրտ պէտք է ունենայ երկրագործը, երբ իւր թափած գառն քրտինքներով վարած ու ցանած արտերն ու տարիներով ինսամարկած պյուրիները կիսականաց ու թառամած գիտին խոնարհած է տեսնում. Կ'նչ միիթարութիւն պէտք է ունենայ երկրագործը, երբ բացի իւր աշխատանքից՝ տեսնումէ որ ի զուր են անցնում իւր գերդաստանի տաժանելի ջանքը, այն գերդաստանի, որ Ապրիլ, Մայիս և Յունիս ամիսներում տապակվումէ ամառնային ջերմ արևի տակ և փոշեխնեղդ լինելով՝ բամբակի, քնջիթի և ուրիշ տեսակ ցանքերի միջից մոլախուերը քաղցանումէ, յուսալով թէ այդ տանջանքը կը վարձատրուի այն արդիւնքով, որ սպասելի է, և ահա այդ բոլոր յոյսերն ու ակնկալութիւնները ի գերեւ են գուրս գալիս ջուր չըլլինելու համար:

Այդ գժբաղգութեան ենթակայ են Քասաղ գետի հովտում՝ Շահ—արխ կոչուած ջրաբաշխից ներքն գտնուող քսանից աւելի Հայարնակ

գիւղերը՝ իրենց հետ ցաւակից ունելով նշն իսկ Ա.աղարշապատը և Մայր Աթոռը։

Այդ գիւղերի միակ զբաղմունքն է երկրագործութիւն, որի պատճառով ամառնային ամիսներում անպատմելի նեղութիւններ են կրում թէ հողի և թէ գլխաւորակես ջրի պակասութեան համար։ Այդ աշխատասէր երկրագործ ժողովուրդը վարում ցանումէ ամեն մի օգտաւետ սերմեր։ յոյս գնելով Արագածի գագաթին կուտակուած ձեան հալոցից կազմուած հարիւրաւոր վտակների վերայ որոնք այդ լեռան լանջերից հոսելով՝ ոռոգումն հարիւրաւոր գիւղեր։ այդ վտակների մեծ աւաղանն է Քասաղ գետը, սակայն գորանից շատերի ջուրը մինչև իրանց մեծ աւաղանին հասնելը սպառվումէ։

Դարուս սկզբներում, երբ Պարսկաստանի ու Տաճկաստանի գաղթականները գետ չէին բնակութիւն հաստատել Արագածու լանջքերի վերայ երբ այժմեան հարիւրաւոր գիւղերից հազիւ մի քանի տասնեւկները գոյութիւն ունեին շատ սակաւ բնակիչներով՝ այդ վտակների և Քասաղի ջուրերը մէ միայն լիուլի բաւականացնումէին ժողովրդեան, այլև աւելանումէին։ Այժմ որ թէ գիւղերն են աւելացել և թէ բնակչաց թիւը՝ ժամանակ չէ հոդալու աշխատանքի միջոցները աւելացնել և արդիւնաւոր գարձնել, որպէս զի ապրուստը մի անտանելի բռն չըդառնար, Քասաղի ջուրը սակաւ է մեր պիտոյքը լրացնելու, Սև ջուրը չի կարող մեղ ջուր տալ, որովհետեւ նորա աղբերակները զտնուում են մեր գիւղերից ներքեւ, սակայն մեզանից 18 վերթու հեռաւորութեամբ հոսումէ Մայր Արաքսը, ժամանակ չէ արդեօք ուշ զարձնել այդ մեծ գետի վերայ։

Անցեալ 1882 թուին ջրի պակասութեան պատճառաւ՝ շատ արգիք և ցանքեր կ կամ 5 անգամ ջրուելու փոխանակ՝ միանգամ հազիւ ջրուեցին, այն ևս՝ աշնանը, հասկանալի է որ այդ այգիքը բացի նոյն տարին՝ մի քանի տարի ևս չըպէտքէ կարողանան տալ սպասելի արդիւնքը։

Յիշեալ աննշան ջուրը չափաւորապէս բաժանելու, և ժողովրդոց մէջ ծագած կոիւների ու անբաւականութեանց առաջը առնելու համար՝ ժողովրդոց ձայնի բազմութեամբ իւրաքանչիւր տարի Գաւառապետի ներկայութեամբ ընտրվումէ մի կառավարիչ Միքրա-ապ (ջրպետ), Այդ կառավարիչը թէ իւր օգնուկաններով կարելին չանք և հնար ի գործ է զնում ժողովրդոց մէջ ջրի պատճառով անբաւականութիւնների առաջը առնել, բայց դարձեալ սարսափելի կոիւներ պատահում են նոյն իսկ եղբարց և ազգականաց միջև, Երբեմն այս կոիւները աւելի զարհութելի կերպարանք են ստանում։ և այն ոչ միայն մասնաւոր մարդոց, այլ գիւղի և գիւղի մէջ։

Ընորհակալութիւն Գաւառապետ Միքրա-ապ, Պ. Կէորդ Խան — Աղեանցին, որ իւր բազմամեայ փորձերով տեղական հանգամանքին քաջ խելահաս լինելով՝ յօգուտ ժողովրդեան ընդհանրութեան անումէ, որչափ հան-

գամանքները ներում են. և աշխատումէ մի կերպ բաւականութիւն տալ ջրի պատճառով զանազան գանգատաւորներին, որոնց գանդատը մասսամբ լինումեն ընդհանրապէս տանուտերների ու այլ գիւղական պաշտօնեաների վերայ, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար ներում են իրանց, զրկանքներ գործել.

Երկու ամսից աւելի է, որ այդ ջրակարօտ գիւղացիք մի անսահման ուրախութեամբ զուարձանում են այն յուսով, որ տեղւոյս Դաւառապետ Մեծ. Պ. Գէորգ Խան — Աղեանը ժողովրդեան կարիքը ի նկատի ունենալով՝ խոստացել է հմուտ մարդկանց ձեռքով հաւաստիանալ թէ արդեօք կարելի՞ է Երասխից ջուր հանել. որչափ ուրախ են գիւղացիք որ այդ խոստումը շուտով կատարելու է, որի հետեւանքը եթէ բարեյաջող լինի, ամենայն բերան կօրհնի անշուշտ Պ., Խան — Աղեանին:

Այս մասին երբ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանամ՝ Արարատի միջոցաւ կը յայտնեմ ընթերցողաց ի գիտութիւն և ի միսիթարութիւն.

Գրաշար Ներսէս Մ. Հայ - Թաղցի.

Ա Զ Գ Ա Յ Ի Ւ

Ամսիս 13 ին Ս. Էջմիածնի միաբանութիւնը սովորական Մաղթանքը կատարեց մայր Տաճարի արևմտեան դրան առաջ ի պատիւ տօնի Ըողակաթի Ս. Էջմիածնի. Հանդիսին ներկայ էին Ճեմարանի աշակերտները իւրեանց վերակացուների հետ. մաղթանքը վերջացաւ Տեղակալ Հօր - Գեր. Տ. Մկրտիչ Սրբազնի «պահպանիչ» ով և օրհնութեամբ, որից յետոյ անմիջապէս սկսաւ Ս. պատարագը Էջման տեղւոյ սեղանի վրայ. պատարագին էր Գեր, Թաղէոս եպիսկոպոս Տ. Դանիէլեանց Ասրպատականի Հայոց նոր նշանակուած կառավարիչը:

ՀԱՅԻ Կ. ՊՈԼՍՈՑ

(Փառակ Յանձն. 27)

Տարած օրը մեր թերթն հրատարակուելէն ետքը գոյժ հասաւ, թէ Շապին — Գարահիսարի Զէքէ անուն Հայաբնակ թաղին մէջ հրդեհ պատահելով՝ 7—800 տուն մախիր գարձած է, Այս ցաւալի գէպքն տեղւոյն Առաջնորդաբարանէն ի Պատրիարքարան ալ հեռազրուած լինելով, Ս. Պատրիարք Հայրը փութացաւ Բարձր. Խպարքոսին հաղորդել և կայսերական կառավարութեան գթութիւնն ու օգնութիւնը հայցել. միւս կողմանէ զրեց առ Գեր. Առաջնորդն Շապին — Գարահիսարի, թէ յշս